

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԵՐԿՈՒ ԱՆՏԻՊ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ ՄԱՐԱՇԻ 1920Ի ԱՂԷՏԻՆ ՄԱՍԻՆ

ՎԱՐԴԻ ՔԵՇԻՇԵԱՆ

1919-21ին Կիլիկիոյ մէջ ծաւալած իրադարձութիւններուն, Հայութեան աղիտալի կոտորածներուն նուիրուած Հայ եւ օտար հեղինակներու բազմաթիւ աշխատութիւններ կան այսօր հրատարակի վրայ: Այդ հրատարակութիւններուն մէջ փաստական Հարուստ նիւթերու հիման վրայ կը լուսաբանուին թուրք-Փրանսական յարաբերութիւնները, Քեմալական Շարժման սկզբնաւորման, Հայկական ջարդերու, ինչպէս նաեւ առանձին քաղաքներու ինքնապաշտպանական կռիւներու վերաբերեալ Հարցեր: Կարգ մը հեղինակներ լուսարձակի տակ առած են նոյն ժամանակաշրջանի պատմական անցքերուն մէջ ամէնէն բախտորոշ Մարաշի դէպքերը եւ անոնց յաջորդող Փրանսական բանակին նահանջն ու Կիլիկիոյ վերջնական պարպումը:

Յունուար-Փետրուար 1920ին Փրանս-թրքական ընդհարման Հետեւանքով մարաշահայութեան Համար ստեղծուած յուսահատական կացութեան մասին արժէքաւոր վկայութիւններ բովանդակող երկու անտիպ տեղեկագիրներ ցարդ անձանօթ մնացած են պատմագրութեան: Մարաշի եւ առհասարակ Կիլիկիոյ ճակատագրական այդ իրադարձութիւններուն մասին պատմող այս տեղեկագիրները գրի առնուած են նոյն դէպքերուն անմիջական մասնակից եւ ականատես Նշան Պ. Սաաթճեանի կողմէ:

Սաաթճեան ծնած է Մարաշ, 1885ին: Նախնական կրթութիւնը ծննդավայրի վարժարաններէն մէկուն մէջ ստանալէ ետք, 1901ին՝ իբրեւ գիշերօթիկ ուսանող, կ'ընդունուի Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճը, ուրկէ 1906ին շրջանաւարտ ըլլալէ ետք կը վերադառնայ Մարաշ եւ կը նուիրուի կրթական գործունէութեան: Կը պաշտօնավարէ տեղւոյն գանազան կրթական Հաստատութիւններու մէջ, իբրեւ այցելու ուսուցիչ՝ մինչեւ 1915ի Մեծ Եղեռնը ու տեղահանութիւն: Մեզի Համար անբացատրելի կը մնայ թէ ինչո՞ւ մեր կողմէ հրատարակուող փաստաթուղթին ներքեւ ան ինքզինք ներկայացուցած է իբրեւ վաճառական: Կիլիկիոյ պարպումէն ետք, երկու տարի՝ 1921-23ին, Սաաթճեան կը ստանձնէ Հալէպի Ազգային Հայկազեան Երկսեռ

Վարժարանաց տնօրէնի պաշտօնը: Այնուհետեւ, Սաաթճեան 1923-27ին կը վարէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պէյրութի Քէլէկեան-Սիսուան որբանոցներուն կրթական վարիչի, ապա նաեւ՝ փոխ-տեսուչի պաշտօնները: 1927-28 տարեշրջանին կրկին կը հրաւիրուի Հալէպի Հայկազեան Վարժարանաց տնօրէնի պաշտօնին: 1928ին, Սաաթճեան կը հրաւիրուի Հալէպի Ամերիկեան Բարձրագոյն Աղջկանց Վարժարան եւ Ալէքսիո Գոլէճ՝ իբրեւ հայերէնի ու հայ գրականութեան ուսուցիչ: Այդ հաստատութիւններուն մէջ կը պաշտօնավարէ յաջորդաբար մինչեւ 1953 եւ 1956, երբ հանգստեան կը կոչուի: Մասնագիտութիւնը կատարելագործելու նպատակով, Սաաթճեան 1929ի ամառը կը մեկնի Երուսաղէմ՝ հետեւելու Սրբոց Յակոբեանց վանքի յատուկ դասընթացներուն՝ ղեկավարութեամբ Գեր. Եղիշէ Պատրիարք Դուրեանի: Այդ տարիներուն կ'աշխատակցի գանազան թերթերու եւ պարբերականներու՝ Կիլիկեցի, Գուշակ, Ռշտունի ծածկանուններով: 1957ի գարնան կը գաղթէ Լոս Անճելըս (ԱՄՆ) եւ հոն մի քանի տարի կ'աշխատակցի Հայաստանի Կոչնակին: Հնարաւոր չեղաւ պարզել անոր մահուան տարեթիւը:

Ներկայացուող տեղեկագիրներէն առաջինը կը նկարագրէ 21 Յունուար-21 Փետրուար 1920ի Մարաշի անցուղարձը: Հեղինակը հանգամանօրէն կը ներկայացնէ դէպքերուն ընթացքը, քեմալական զօրքերուն եւ տեղացի չէթէական խումբերուն վայրագութիւնները, Փրանսացիներուն անփառունակ նահանջը եւ այլ մանրամասնութիւններ:

Սոյն տեղեկագիրը արժէքաւոր է շարք մը կարեւոր վկայութիւններով, որոնք յաւելեալ լոյս կը սփռեն Մարաշի դէպքերուն գանազան ծալքերուն վրայ¹, բայց անոր հիմնական արժէքը կը կայանայ յատկապէս այն իրողութեան մէջ, որ ան գրի առնուած է հրաշքով ողջ մնացած ականատեսի մը կողմէ՝ դէպքերէն անմիջապէս ետք, ընդամէնը քանի մը օր անց՝ ամենաթարմ տպաւորութեամբ: Եթէ անգամ, իրադարձութիւններու անմիջական ազդեցութեան տակ, որոշ հարցեր զգացական, շեշտուած գնահատականներով կը ներկայացուին, այնուամենայնիւ, ընդհանուրին մէջ, անոնք չեն հակասեր պատմութեան մէջ արձանագրուած եւ յայտնի փաստերուն: Այս պարագային, ուշագրաւը շարադրանքին մէջ տեղ գտած մանրամասն, օրագրային բնոյթի գրառումներն են, որոնք կ'օգնեն նաեւ ճիշդ գնահատելու Մարաշի մէջ ստեղծուած ճգնաժամային կացութիւնը ընդհանրապէս եւ Փրանսական գինուորական հրամանատարութեան եւ գինուորներուն գործելակերպը մասնաւորապէս:

1919ի Սեպտեմբերին Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ կնքուած պայմանագիրին համաձայն, նոյն թուականի Հոկտեմբեր 20էն սկսեալ անգլիական զօրամասերը կը հեռանան Մարաշէն, անորոշ եւ միանգա-

մայն վտանգաւոր կացութեան մատնելով մարաշահայութիւնը: Հոկտեմբեր 30ին անգլիական մեծաթիւ զօրքի փոխարէն Մարաշ կը մտնեն Ֆրանսական բանակի շուրջ 200 զինուորներ, որոնց շարքին նաեւ՝ հայ լեզէոնականներ: Պարզ է, որ այդքան փոքրաթիւ Ֆրանսական ոյժերը, չէին կրնար կասեցնել օրէ-օր սաստկացող դէպքերուն ընթացքը: Ընդհակառակը, բոլոր փաստերը կը խօսին այն մասին, որ թուրքերը շատ շուտով հասկնալով, որ իրականութեան մէջ այդպիսի ոյժ մը գոյութիւն չունէր Մարաշի մէջ, որ կարենար խափանել նախապէս մշակուած ծրագիրը, կը սկսին բացայայտօրէն կոտորել քաղաքի հայ բնակչութիւնը: Ինչպէս իրաւացիօրէն կը նշէ պատմաբան Շմաւոն Թորոսեան, «քաղաքում գտնուող 200 Ֆրանսիական զինուորները, եթէ նոյնիսկ ընդունակ լինէին հրաշքներ գործելու, պարզապէս ի վիճակի չէին դիմագրաւելու վտանգը եւ դիմադրելու մինչեւ ատամները գինուած հազարաւոր չէթէներին»²:

21 Յունուար 1920ին Մարաշի մէջ կը բռնկի թուրքերու հակաֆրանսական ապստամբութիւնը, որ կը տեւէ մինչեւ 11 Փետրուար, այսինքն՝ Ֆրանսական զօրքերուն նահանջի թուականը: Ստեղծուած խառնաշփոթ կացութեան մէջ հայերը կը կեդրոնանան հայկական թաղամասերուն մէջ, պատսպարուելով եկեղեցիներու, դպրոցներու եւ օտար հաստատութիւններու մէջ, որոնք անմիջապէս կը շրջապատուին թուրքերուն կողմէ: Կացութիւնը առաւել կը սրի Յունուար 23ին, երբ Մարաշի շրջակայ գիւղերու զինուած չէթէները եւ քեմալական կանոնաւոր զօրախումբերը կը խուժեն քաղաք, չորս կողմէն կրակի կը մատնեն հայկական թաղամասերը, անխնայ կոտորածի ենթարկելով Մարաշի խաղաղ հայ ազգաբնակչութիւնը³: Ականատեսներու վկայութեամբ, ամէնէն զարհուրելի կ'ըլլայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հրկիզումը, ուր ապաստանած էին երկու հազարէ աւելի հայ փախստականներ: «Դրանք դժողքի, ոչնչացման, ջարդի օրեր էին, - նոյն դէպքերուն մասին պիտի գրէր օտար ականատես մը՝ Մարաշի Ֆրանսիաքեան վանքի վանահայր Մաթեոն Միւրը (Materne Mure), - օրեր, որոնք մարդ խելագար կը դարձնէին, եթէ դէպքերի տեսարաններն անցնէին նրա աչքի առջեւով»⁴:

1920 Փետրուար 10ի-10յս 11ի գիշերը, Ֆրանսական բանակի հրամանատար՝ Զօրավար Լուի Ալպէր Քէրէթ (Louis Albert Quérette), անսպասելի եւ անակնկալ կերպով հրաման կ'արձակէ Մարաշի մէջ գտնուող Ֆրանսական զօրամասերուն՝ քաղաքէն հեռանալու, կարգադրելով միաժամանակ, որ այդ հրամանը խիստ գաղտնի պահուի հայ ազգաբնակչութենէն: Այդ է պատճառը, որ միայն Ֆրանսական դիրքերուն մօտ ապաստանած հայերը կը տեղեկանան նահանջին մասին: Ֆրանսական զօրավարը, որոշ տատանումներէ ետք, մօտ էինգ

Հազար Հայերու կ'արտօնէ զօրքերուն հետեւիլ, իսկ ութ Հազարի մօտ Հայերու ճակատագիրը կը յանձնէ թուրք չէթէներուն եւ զազանարարոյ ամբոխի քմահաճոյքին: Ֆրանսական զօրքին հետեւած փախստականները սառնամանիքի, ձիւնի ու մահուան սպառնալիքի տակ ստիպուած կը քալեն երկար ու տանջալի ժամեր, իրենց ետին ձգելով սառած եւ ուժասպառ կիներու ու մանուկներու բազմաթիւ դիակներ: Փետրուար 15ին, նահանջող ֆրանսական զօրքերն ու ողջ մնացած Հայ փախստականները, աննկարագրելի տառապանքներով կը Հասնին Իսլահիյէ, ուրկէ շոգեկառքով կը փոխադրուին Ատանա: Տարբեր տուեալներու Համաձայն, նահանջի ճանապարհին Հայերը տուած են 3-5 Հազար, իսկ ֆրանսացի զինուորները՝ 800-1200 զոհ:

Այսպիսով, քեմալական թուրքիան շարունակելով երիտթուրքերու Հայաջինջ քաղաքականութիւնը եւ օգտուելով Դաշնակից Տէրութիւններու քաղաքական ու զինուորական զարտուղի ռազմավարութենէն, կ'իրականացնէր վաղուց փայփայուած ծրագիրը՝ Հայաբնակ հողերը պահել թուրքիոյ տիրապետութեան տակ, սակայն՝ առանց Հայերու:

Մեր կողմէ Հրապարակուող երկրորդ տեղեկագիրը կարեւոր փաստաթուղթ մըն է ֆրանսական նահանջէն ետք Մարաշ մնացած մօտ 8000 Հայ իլեակներուն ճակատագիրին մասին: Չայն ստորագրած են Հալէպ գտնուող մարաշցի վեց ազգայիններ, վկայելով, որ տեղեկագիրին Համար Հիմք ծառայած են նոյն օրերուն Մարաշէն ստացուած պաշտօնական տեղեկագրութիւնները, ստորագրուած՝ «տեղւոյն յարանուանական պետերու եւ երեւելիներու կողմէ»: Սոյն տեղեկագիրը պաշտօնական կոչ մը ըլլալ կը թուի, ուղղուած Հայասէր մարդասիրական տէրութիւններուն ու կազմակերպութիւններուն:

Հնարաւոր չեղաւ տեղեկագիրը ստորագրած ըոլոր անձանց վերաբերեալ մանրամասն կենսագրական տուեալներ ձեռք բերել: Անոնցմէ Արամ Մոմճեան եւ Պ. Գրաճեան յետագային, երկար տարիներ վարչական պատասխանատու պաշտօններ վարած են Մարաշի Հայրենակցական Միութեան եւ Հալէպի Ս. Գէորգ Եկեղեցւոյ թաղական խորհուրդին մէջ: Բացառուած չէ, որ միւս ստորագրողներուն մէջ յաջորդ մէկ-երկու տարուան ընթացքին Հարաւային Ամերիկա գաղթածներ ըլլան, ինչ որ Համատարած երեւոյթ մըն էր այդ շրջանին:

Ներկայացուող տեղեկագիրները այժմ կը գտնուին մեր տրամաբութեան տակ: Առաջինը գրի առնուած է 17 էջերէ կազմուած աշակերտական փոքր ծաւալի տետրակի մը մէջ, կոկիկ եւ ընթեռնելի ձեռագիրով, իսկ երկրորդը՝ նամակի հինգ մեծադիր թերթերու վրայ: Փաստաթուղթերը կը ներկայացնենք բնագրային Հարազատութեամբ, միջամտութիւններու նուազագոյն չափով, որոշ տեղեր կրճատուածները բանալով եւ ի Հարկին նաեւ մասնակի սրբագրութիւններ կատարե-

լով: Որոշ պարագաներու, երբ իր մտքերը արագօրէն գրի առնելու ընթացքին, հեղինակը ոճական անհարթութիւններ թոյլ տուած է, պահած ենք բնագիրը, բայց փակագիծի մէջ աւելցուցած՝ լատիներէն (sic!) դարձուածքը՝ ընթերցողը վստահեցնելու համար թէ առկայ անհարթութիւնը կը բխի հեղինակէն եւ տպագրական վրիպակի հետեւանք է: Մեր կցած ծանօթագրութիւնները կ'օգնեն լրացնելու ներկայացուող էջերուն մէջ տեղ գտած տեղեկութիւնները:

ՄԱՐԱՇԻ ՉԷԹԷԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (ԱԿԱՆԱՏԵՍԷ ՄԸ ԳՐՈՒԱԾ)

Մարաշի Չէթէական կախին տեղեկագրութիւնն:

Յունվար 21, Երեքշաբթի ժամը կէսօրէն վերջ ժամը 2¹/₂ին, Մարաշի Ֆրանսական Գրաւման Բանակին հրամանատար Զօր-Քէրէթ⁵ թուրք կառավարութեան ներկայացուցիչներն կանչելով, առաջարկեր էր մինչեւ երկու ժամ պարպել եւ Ֆրանսացւոց յանձնել կառավարատունն եւ քաղքին միջնաբերդը: Թուրք ներկայացուցիչներն յետ խորհրդակցութեան քսան եւ չորս ժամ պայմանաժամ խնդրած էին: Այդ պայմանաժամը տրուած էր եւ հետեւեալ օրը՝ Յունվար 22, Չորեքշաբթի ժամը 2¹/₂ին (կէսօրէ վերջ) թուրք կառավարութեան ներկայացուցիչներէն կառավարչին փոխանորդող թահրիրաթ միւտիլիին⁷, ժամտարմըրիի հրամանատարը, *պէլէտիէի ըէյա*⁸ Հաճի պէյ⁹ եւ թուրք երեւելիներէն Ղօճապաշ Չատէ Հաճի Նաճի¹⁰, Տէտէզատէ Մէմէտ¹¹, Շիրման Չատէ Արէֆ¹² եւ երկու ուրիշ աւագանիներ Զօր-Քէրէթին քով երթալով, կառավարչատան եւ միջնաբերդին յանձնումը ազգին կամքին հակառակ ըլլալն, եւ Ֆրանսացիք ինչ որ ալ խորհին եւ գործեն թուրք ազգը երբեք իր որոշումը փոխելու պէտք մը չունենալն յայտարարելու եւ Զօրավարին ըսելու էին թէ իր գիտցածը իր ձեռքն է, թուրքին գիտցածն ալ թուրքին ձեռքը: Զօրավարը այսքան յախուռն պատասխանէ մը անակնկալի եկած, անմիջապէս կը հրամայէ քաղաքին Ֆրանսական զօրքը՝ ի գէն կանչել: Հրամանը կատարուեցաւ ժամը 3ին: Երկայի եւ թաղերու մէջ Ֆրանսական զինուորներուն շարժումը եւ ՚ի գէն վազվառելը թուրք եւ հայ բնակչութեան մէջ խուճապ մը յառաջ բերաւ եւ ով որ ալ ըլլայ ինքը, ամէնէն մօտը գտնուող տուն, խան, կամ եկեղեցի մը ապաստանելով, մինչեւ դէպքին վախճանը հոն մնացին:

Նոյն ժամուն, միջնաբերդէն, Աճէմլիի¹³ նոր մզկիթէն եւ Սէրայ Ալթը¹⁴ թաղին մէջ Ծաթմաօղլուի տունէն մէյ մէկ ձեռք գէնք պարպուեցան, որ նշան է եղեր պատերազմի յայտարարութեան: Թուրքերն, որ մէկ օրուան պայմանաժամ ստացած էին, նոյն 24 ժամը գործածեցին տիրող դիրքերու վրայ ամուր պատնէշներ շինելու, նոյնիսկ կառա-

վարչատան մօտ, թուրք գերեզմանոցին եւ միջնաբերդին վրայ պեղումներ եղան, խրամներ բացուեցան, ինչ որ Փրանսացիք եւ մենք օր ցորեկով տեսանք: Հրացանաձգութիւնն սկսաւ: Հոս հոն բացը մնացողներ սպանուեցան տուներէ արձակուած թուրք զնդակներէ: Յատկանշական էր սա պարագան, որ թուրքերն նախորդ ջարդերու մէջ եղածին պէս չ'կրցան տուներէ դուրս թափուիլ եւ հայոց վրայ յարձակում գործել: Հայերն ալ լուկ ինքնապաշտպանութեան օրինական զգացումէն մղուած, թուրք եւ Փրանսական այս կռիւին մէջ զոհ չերթալու համար, քիչ շատ հասկցան պատրաստ գտնուելու պէտքը եւ յարձակումի պարագային զէնքով դիմադրելու կարիքը: Նոյն օրը մթնցաւ հրացանաձգութեան մէջ: Գիշերն ալ շարունակեց զէնքի ձայներն, բայց ընդհանրապէս օդին մէջ կը պարպուէին անոնք, քանի որ թուրքերն իրենց տուներէն ու պատնէշներէն դուրս չէին ելլեր եւ Փրանսացիք ալ իրենց կեդրոններուն մէջ թխմուած, անոնք ալ ծակէն կրակ կ'ընէին, եթէ տեսնէին թուրք մը, ինչ որ խիստ հազուագիւտ պարագայ մըն էր: Փրանսացիներուն կեդրոններն էին թուրք գինւորական գօրանոցը, գերման որբանոցը (Պէյթ Եալօմ անուամբ)¹⁵, Բողոքականաց Ա. Եկեղեցին¹⁶, Հայ Կաթողիկէ Եկեղեցին¹⁷, Լատինաց Վանքը¹⁸, Ս. Քառասուն Մանկանց Եկեղեցին¹⁹, Թաշխան, Եէխմանտի խանը, Կաղ տամբ, Գերապայծառի խանը եւ Արասաի խանը²⁰: Ասկէ զատ Եէքէրտէրէի²¹ Ս. Գէորգ²² եւ Հայ Թաղի Ս. Աստուածածին²³ եկեղեցեաց մէջ ալ Չօական գինւորներ ունէին²⁴:

Յունվար 22-24 մինչեւ Ուրբաթ իրիկուն յատկանշական եւ յիշատակելի դէպք մը չ'պատահեցաւ: Հրացանաձգութիւնն եւ առանձնական սպանումներ շարունակեցին: Ինչպէս առաջ յիշեցի, մեծաւ մասամբ օդին մէջ կը պարպուէին անոնք: Թուրք խուժանին մէջէն փախչելով մեր քովը ապաստանող հայ բանիմաց եւ ճարպիկ կնոջ մը պատմածին նայելով, այդ երեք օրուան մէջ թուրքերն սաստիկ վախցած էին Փրանսական յարձակումէ մը եւ պատնէշներու մէջ սմբած կը դողային, իսկ կին եւ անչափահասներն ամրակուռ բաղնիքներու մէջ գետեղած էին գիշերուան մութին մէջ: Սակայն, միւս կողմը, յարձակում գործելու կամ կռիւին վախճան մը տալու միակ պաշտօնն ու պարտականութիւնն ունեցող Փրանսական գինւորներ, մտած իրենց սենեակներուն մէջ հանգիստ հանգիստ կ'ուտէին եւ գինի կը ճնկէին, այնպէս որ այդ ըրպէին եթէ մէկը գար եւ հարցնէր թէ ո՞վ պիտի փրկէ այս քաղաքը ներկայ տագնապալի կացութենէն, անշուշտ (sic!) եմ որ այդ պաշտօնը ունեցող մէկը չ'պիտի կրնար գտնել ամբողջ քաղքին մէջ: Մինչ 22 հազար տեղացի հայերու եւ շրջակայքի 4 հազար գիւղացի (Չէյթուն, Փունուգ, Կապան, Տէօնկէյէ²⁵, Եէնիճէ Գալէ²⁶, Քիշիֆի²⁷, Ֆրնտրճագ²⁸ եւ այլն) հայութեան լինելը եւ չ'լինելը այս ըրպէի

հրամայողական պէտքը եղող առնական, գինւորական անյետաձգելի շարժումէ մը կախուած էր: Այս ամէնն կը խօսէինք Հայերս Ֆրանսացի հրամանատարներուն, որոնք սփինքսի լուսթեան մը դատապարտուածի պէս սառած կը կենային:

Չորս օրուան այս դատապարտելի անգործութիւնը, թուրք չէթէներուն²⁹ հասկցուց որ Ֆրանսացիք չ'պիտի գործեն այնպէս, ինչպէս իրենք կը կարծէին: Հետեւաբար սկսան իրենց պատնէշներէն դուրս ելլել եւ հայոց թաղերու շուրջ դիրք բռնել: Ֆրանսացուց աչքին առջեւ սկսան հայոց թաղերն հրդեհել եւ հրդեհէն փախչողներն գնդակահար սպաննել: Ուրբաթ, 24 Յունվար իրիկուան դէմ քաղքին չորս կէտերէն հրդեհ ծագեցաւ, որոնք հայոց բնակած թաղերն էին: Շաբաթ օր, թուրք չէթէներն արձակ համարձակ յարձակեցան հայ թաղերու վրայ: Գոցթուշ, էթմէքճի, Պողազքէսէն, Աճէմլի, Խաթունիյէ եւ Պայազըտլըի հայ թաղերն յարձակումի ենթարկուեցան 25-26 Յունվար, Շաբաթ եւ Կիրակի օրերն եւ սրէ անցուեցան հայ բնակչութիւնն այդ թաղերուն: Շատեր անձնատուր ըլլալու հրաւիրուեցան: Յանձնուողներն Ուլու Ճամի³⁰ եւ զօրանոցի դիմացը Քիրէճ օճաղըն³¹ տարուելով մորթուեցան ոչխարներու պէս եւ այրուեցան ողջ ողջ: Ականատես մը՝ Պ. Պողոս Մասէրէճեան կը պատմէ, որ զօրանոցի Ֆրանսական գինւորներուն աչքերուն տակ հրկիզուող Հայերու ողբ ու կոծը Ֆրանսացուց քամահրանքին ենթակայ եղած եւ նոյնիսկ անոնց լուսանկարը առնուեցան (sic):

Թուրք չէթէները կը պօռային այդ օրեր՝ «ո՛ւր են Ֆրանսացիք, որոնց Մարաշ մուտքը այդքան փառաւորապէս տօնեցիք Հայերդ, ո՛ւր են, թող դան ձեզի փրկեն»: Այս միջոցին գէնք ունեցող Հայեր ամէն կերպով գործածեցին իրենց առձեռն միջոցներն եւ պատուաւոր կերպով մեռնողներ խիստ շատ էին: Չարդուած թաղերու ողբ ու կոծերն ժամերով հեռու վայրեր կը լսուէին: Հրդեհներու ճարձատիւնը ականջներ կը խուլցնէին: Միւս հայ թաղերու բնակչութիւններն յոյսերնին կտրած փրկութենէն, գիշերներու տակ խուժք խուժք ձգեցին ամէն բան եւ փախան ապաստանելու Հայ Կաթողիկէ, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիներն, Բողոքականաց Ա. Եկեղեցին, Պէյթ Շալօմ, Լատինաց Վանքը, Թաշխան եւ զօրանոց: Այս տողերը գրողն ալ, 1200 հոգիներու հետ, փախանք գիշերանց դէպի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցին եւ ճամբան յարձակում կրեցինք չէթէներու կողմէ, ուր 300է աւելի կորուստ տուինք, մէջն ըլլալով 3 զաւակներս, կինս եւ քոյրս: Վերապրողներն հասանք Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցույն մօտերը, ուր Ֆրանսացիք կրակ բացին մեզի դէմ, հակառակ անոր որ մեր հայ ըլլայն գիտէին, քանի որ մեր քովը եղող 20 Ֆրանսացի գինւորներ մեզի հետ փախած եւ մեզմէ 10 ըռպէ առաջ հասած էին նոյն եկեղեցին

եւ տեղեկութիւն տուեր էին, որ իրենց բնակած թաղին հայ համայնքը կու գայ ապաստանելու Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցին: Հակառակ այսքան որոշ ծանօթութեան, հակառակ մեր Փրանսերէն կանչելուն «secour aux armeniens»³³, կրակը շարունակեց եւ նոյն շրջանակին մէջ 50-80 հոգիներ ֆրանսական կրակի տակ ինկան դիապաստ: Մեր ողբ ու կոծին, Փրանսացիք կը պատասխանէին «Իսլահիյէի»³³ ճամբան բռնեցէք, կորսուեցէք», մինչդեռ նոյն ճամբան բռնել, ամէն ոք գիտէր թէ բնաջինջ ըլլալու դատապարտուելէ տարբեր բան մը չէր: Այս ալ լաւ գիտէին Փրանսացիք, քանի որ երկու օրէ ի վեր շրջակայ թուրք գիւղերէն չէթէներ արձակ համարձակ կու գային միանալու Մարաշի չէթէներուն: Յունվար 27-Փետրուար 5 կացութիւնն նոյնը կը մնար: Քաղաքին մէջ միայն Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյն մէջ մնացած էր, ըստ ումանց 3000, իսկ ըստ իս 2000ի մօտ հայեր: 10 հայ կամաւոր գինւորներու պաշտպանութեան եւ իրենցմէ զէնք ունեցողներու ոյժին կրթնելով, անոնք մնացեր էին նոյն վայրը: Ուրիշ հայաբնակ վայրեր կամ պարպուած եւ կամ ջարդուած լմնցած էին: Հրացանաձգութիւնն կը շարունակէր: Թրքական երկու թնդանօթներ, որոնց համար 85 միլիմէթրնոց է կ'ըսէին Փրանսացիք, Փրանսական դիրքերու վրայ կրակ բանալու սկսան: Փրանսացւոց մեռելական անգործութիւնն չէթէներուն կու տային (sic!) օրէ օր ամէն խիզախութիւն: Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցին ալ թնդանօթի բռնուեցաւ թուրք Վազրֆ թաղէն:

Երկու թնդանօթներէ գատ թրքերն ունէին նաեւ տասնի մօտ միթրայիէօզներ եւ միթրայիէթներ (fusil automatique)³⁴: Փրանսացիք ունէին 37½ միլիմէթրնոց պզտիկ թնդանօթներ, որ ոչինչ կ'արժէր եւ բազմաթիւ միթրայիէօզներ: Երբ թրքերն կ'սկսէին թնդանօթաձգութեան, Փրանսացիք ալ մէկ քանի հարուածով կը պատասխանէին իրենց դիրքերէն, բայց կտրուկ եւ արմատական գործունէութիւն մը չ'կար այս անել կացութեան վախճան մը տալու համար:

Փրանսական դիրքերու մէջ ապաստանող հայերս մերկ, բուլիկ, անօթի, վերջին ծայր թշուառ վիճակի մը մէջ անսուաղ կը մեռնէին: Փախուստի ատեն կենսական պիտոյք, ծածկոց, կերակուր եւ այլն բերել կարելի եղած չէր: Նոյնիսկ շատեր գլխաբաց եւ բուլիկ հասած էին այս դիրքերն: Փրանսացիք ամբողջ քաղաքին միակ հացահատիկի շուկան՝ Արասան³⁵ գրաւած էին: Հակառակ այնքան հարիւր հազարաւոր քիօ ցորեն, կորեկ եւ սիսեռի գոյութեան, անոնք չ'հաճեցան այդ պարէններէն բաշխել անօթի մեռնող հայերու: Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյն մէջ միակ օր մը իւրաքանչիւր անձի համար 50-80 կրամ ցորեն տուին: Այն ալ բազում աղաչանաց արդիւնքն էր:

Փետրուար 4ին այրեցին Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցին: Թուրք չէթէներ հրդեհ մարելու գործածուած պօմպերով (թուլումպա)

քարիւղ ծորեցուցին եկեղեցւոյն եւ կից դպրոցին վրայ, ետեւէն ալ գերմանական հրկիզող պոմպաներ նետելով կրակ տուին եկեղեցւոյն: Ձինւորներ փախան եկեղեցւոյն կցուած խանը, իսկ հայերս Թաշխան եւ քովի գինետունը: Նոյնպէս այրեցին մեր դիմացը Ս. Աստուածածին Եկեղեցին: Իր մէջը եղող 2000ի մօտ հայերը ձեռքերնին դէպի մեզ կարկառած, Փրանսական եռագոյն դրօշակով օգնութիւն հայցելով, ողջ ողջ ողջակիզուեցան: Նոյն ըրպէին մեր քովի Փրանսական հրամանատարն եւ սպաներ պատուհաններէն կը դիտէին անոնց հրկիզումը եւ գինիի գաւաթներն կը պարպէին, համադամներու սեղանին առջեւ, քահ քահ արձակելով: Անոնց հրկիզումէն օր առաջ դիմեցինք հրամանատարին եւ 100, գէթ 50, գինւոր ուղեցինք, մենք ալ խոստանալով 200 հոգի միացնել անոնց եւ երթալ ազատել նոյն Ս. Աստուածածին Եկեղեցւոյն մէջ մնացող եւ մահուան դատապարտուած հայերն: Միջոցը մէջերնիս շատ հեռու չէր, եւ կտրուելիք ճամբուն կէսը Փրանսական զքաւման տակ էր: Հրամանատարին մեզի տուած պատասխանը եղաւ, «իմ հոգս չէ այդ, ես մէկ հատ իսկ Փրանսացի գինւոր չեմ տար զանոնք ազատելու համար»:

Այ հասկցած էինք մեզի վիճակուած վախճանը: Կացութիւնն մեզի համար ճգնաժամային էր: Իրաց ճշմարիտ գոյնը քողագերծուած էր մեր աչքին առջեւ: Փրանսացիք սիսթէմաթիկ, ծրագրուած, դարրնուած եւ կերտուած քաղաքականութիւն մը կը գործադրէին: Պիտի փճանախնք (sic!) ի մեծ ուրախութիւն բարեկամաց եւ թշնամեաց, զորս չ'զանազանելու անմտութիւնը մեր յաւիտենական մեղապարտութիւնն կը կազմէ:

Փետրուար Յին այրեցին թուրքերն նոյնպէս Երխմանտի խանի Փրանսական դիրքը: Օր առաջ հոն ապաստանող հայեր մազապուր պրծան ստոյգ հրկիզումէ եւ ջարդէ մը, քանի որ թնդանօթի, միթրայիէօզի, միթրայիէթի եւ մավզէրի դժոխային կրակ մըն ալ կ'ընկերանար հրդեհին, բոլորն ալ թուրք չէթէներուն կողմէ: Այ չէթէներն կը ծաղրէին Փրանսական հօր՝ կառավարութիւնն: Իրենց ձայներն լսեցի բազմիցս, որք կը պօռային՝ «ապտէսխանէտէն պաշգա կիրէճէք իէրի-նիզ գալմատը կեալուր Փրանսըզլար, տըշարը չըզըն, թէսլիմ օլուն»⁵⁰: Այ մօրուքնին համրել տուեր էին:

Թաշխանի դիրքին վրայ ալ յարձակում գործեցին: Նոյնպէս Բողոքականաց Ա. Եկեղեցին եւ ուրիշ Փրանսական դիրքեր խուժանային յարձակումի ենթարկուեցան, սակայն քարաշէն եւ ամուր դիրքեր աւելի երկար ատեն կրցան դիմադրել: Հայերու աշխատութիւններն մեծ բաժին ունին այս դիմադրութեանց մէջ: Հայ էրիկ մարդիկ պատնէշներ կը շինէին: Հողի եւ աւազի պարկեր լեցնելով Փրանսացւոց

աղուէսի որջերն ամրացուցին: Գէթ կտոր մը հացի իրենց արդար իրաւունքին արժանանային:

Փետրուար Յին էր դարձեալ, երկու Ֆրանսական օդանաւեր սաւառնեցան քաղքին վրայ, որոնց թրքերն կրակեցին ամէն տեսակ գէնքերով: Սաւառնակներն առանց գործ մը տեսնելու մեկնեցան: Հետեւեալ օրն երկրորդ անգամ մէկ սաւառնակ եկաւ, դարձեալ օդին մէջ շրջան մը կատարեց եւ մեկնեցաւ:

Նոյն օրը Ֆրանսական նորեկ գինւորներու գունդեր երեւցան Մարաշ-Իսլահիէ խճուղիին վրայ: Իրիկուան դէմ լսեցինք, որ Ատանայէն Գնդ. Նօրման³⁷, երեք պաթայիօն³⁸ գինւորով օգնութեան հասած էր: Ասոնք Մարաշէն Յ քիլոմէթր վարը Աթ Իչի անուն դաշտին մէջ բանակեցին: Հրացանաձգութիւնը քաղքին մէջ միշտ կը շարունակուէր: Հրդեհը քաղաքին կէսը փճացուցեր էր: Ամբողջ շուկաներն, խանութներն կտորուած, հայուն եւ թրքին ապրանքներն թալնուած, հարստութիւնն փճացած, դրամարկղներն ճեղքուած լմնցած էր: Նիւթական վնասը անսահման էր: Կրնայ ըսուիլ որ քաղաքին ընդհանուր հարստութեան 90 առ հարիւրը բնաջինջ եղած էր:

Փետրուար 8, Կիրակի օր, 7-8 վայրերէ նոր հրդեհներ ծագեցան: Հրդեհի տուողներն էին թուրք չէթէներն, այնպէս որ նոյն օրը քաղքին մէկ չորրորդն ալ փճացաւ: Հետեւաբար, հազիւ մէկ քառորդն կանգուն կը մնար, այն ալ թալնուած, մերկացուած վիճակի մէջ: Թուրքերն 10 հայ տուն այրելու համար 5 հատ ալ թուրք շէնքեր կը գոհէին: Նորեկ Ֆրանսական գինւորներն տեսնելով թրքերն աւելի կատողած, մոլեգնած վագրներու պէս կը յարձակէին, կ'այրէին, կը մորկէին իրենց շուրջ բոլորն: Անյուսութիւնն կատողեցուցած էր զիրենք, քանի որ եկող սաւառնակներն եւ նորեկ Ֆրանսական օգնական ոյժերն իրենց համար մեծ սարսափ պատճառած էր:

Նոյն Կիրակի օրուան կէսօրէ վերջ ժամը 2ին, դարձեալ սաւառնակ մը եկաւ եւ Ֆրանսական զօրանոցը եւ ուրիշ երկու դիրքերու վրայ թղթեր նետեց, որոնց հետեւանքը կէս գիշերէն մէկ ժամ առաջ հասկըցանք: Նոյն ժամուն Ֆրանսական գինւորներուն մէջ հասկըցուեցաւ իրարանցում եւ մեկնելու պատրաստութիւն մը: Մեր հարցումին պատասխանեցին, որ բան մը չ'կար: Մեր կրկին պնդումներուն վրայ, ըսին, որ Աթ Իչի նորեկ գինւորներուն քով պիտի երթան եւ հետեւեալ օրը քաղաքին վրայ պիտի յարձակին եւ մեզի պիտի ազատեն: Նախ հաւատալ ուզեցինք: Վերջը, այսչափ փորձառութենէ վերջ, կրկին խաբուիլ չուզելով խնդրեցինք, որ մենք ալ մեկնինք իրենց հետ: Ֆրանսացիք մերժեցին մեր ընկերանայլը: Հաւաստեցին, որ հետեւեալ օրը պիտի ազատեն մեզի: Անշուշտ, կրկին աղաչանք: Վերջապէս Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյն եւ Թաշխանի մէջ գտնուող 3000ի

մօտ հայեր, կէս գիշերէն մէկ ժամ վերջ, Ֆրանսական զինուորներու մեկնումէն 10 ըռպէ յետոյ, հետեւեցանք իրենց, եւ իջանք Աթ Իչի: Նոյն օրը, ուրիշ երկու երեք Ֆրանսական դիրքերէ ալ քաշուեցան զինուորներ եւ միացան մեզի: Նոյն դիրքերու մէջ գտնուած հայերը, մեզի պէս խարուած են թէ մնան քաղաքին մէջ եւայլն: Կրկին վերի յանկերգը: Փետրուար 9, Երկուշաբթի, մութ լուսին սաստիկ ձիւնն սկսաւ: Աստուած ալ պատերազմ հրատարակած էր մեզի: Բացօդեայի տակ 3000 հայեր՝ անօթի, անսուաղ, ձիւն ու բուքին կոտորակուելու սկսանք: Նոյն օրը քաղաքին մէկ մասը Ֆրանսացիներու կողմէ թնդանօթի բռնուեցան (sic!): Այն վայրերն, ուր դեռ Ֆրանսական զինուորներ կը մնային, խնայուեցան անշուշտ: Երկուշաբթի օր գիշեր, Փետրուար 9ին, քաղաքին մէջ մնացող ուրիշ Ֆրանսական կեդրոններն ալ պարպուեցան եւ զինուորներն եկան միացան մեզի՝ Աթ Իչի, եւ նոր բերուած 75 միլիմետրոնոց ծանօթ Ֆրանսական թնդանօթներ գետեղուեցան գիշերանց քաղաքին շուրջ բոլորն, եւ 10 Փետրուար, Երեքշաբթի օր, կրկին սկսաւ պօմպարտըմանը՝, հրդեհի, աւերումի սոսկալի նախճիր առթելով դարձեալ: Քաղաքին մէջէն 15 նոր դիրքերէ հրդեհներ ծագեցան: Այնպէս կը կարծուի, որ Փետրուար 9 եւ 10ի այդ երկու օրուան պօմպարտըմանի միջոցին 1000է աւելի ռումբեր արձակուեցան քաղաքին վրայ, ուր խարուած, մնացած 8-10 հազար հայեր բոցերու եւ աւերակներու, փլուզումի սարսափին մէջ մնացին: Պարպուած բոլոր Ֆրանսական դիրքերու հրամանատարներ միեւնոյն խօսքով խարբր եւ քաղաքին մէջ ձգեր փախեր էին խեղճ հայ ժողովուրդը, որ 10նեակ օրերէ ի վեր իրենց քով ապաստանած էին (sic!): Երեք ամիսներէ ի վեր պալօներով, խնճոքներով, ահագին ծախսերով Ֆրանսացի զօրավար, գնդապետ եւ սպաներն հիւրասիրող ծանօթ մեծահարուստ Խրլագեան Յակոբ Աղան եւ իր գերդաստանն՝ մօտ 100 հոգիներ, խարուած եւ կաթոյիկ եկեղեցին լքուած են, նոյն այդ իր բարեկամ Ֆրանսական սպաներու կողմէն, անգթօրէն: Խեղճ Խրլագեանը, զինուորներու մեկնումէն 3 ժամ վերջ միայն իմանալով, անոնց ետեւէն ճամբայ կ'իյնայ եւ շուկայի մէջ չէթէներու կողմէն բռնուելով, մեծով եւ պզտիկով տեղն ու տեղօք կը մորթոտուին. պարագայ մը, որ յատկանշական է Մարաշի չէթէական պատերազմի պատմութեան մէջ: Ֆրանսացւոց առ հայերս ունեցած չար, ծրագրուած եւ անխիղճ վերաբերումին մասին որոշ գաղափար մը տալու համար, նմանօրինակ մանրադէպքերու պատմութիւններ կը բաւեն իրողութիւնն մերկապարանոց ներկայացնելու մեզի:

Փետրուար 11ին, Չորեքշաբթի լուսնալու մօտ, ասկէ անկէ 200ի մօտ ուրիշ հայեր ալ հրաշքով պրծեր, եկան միացան մեզի, եւ լուսնալու մօտ մեկնեցանք Ֆրանսական զինուորներու հետ դէպի Իսլա-

Հիյէ: Մարաշի մէջ մէկ հատ իսկ Փրանսացի գինւոր մնացած չէր, իսկ 8-10 հազար հայեր, վերջին ումրակոծումէն եթէ ողջ մնացին, թրքերու եաթաղանին եւ դաշոյններուն յանձնելով փախան Փրանսացիք եւ իրենց հետ 3250 հայեր: Երկու ժամ վերջ Ազսուի կամուրջին⁴⁰ վրայ թուրք չէթէներ դիմացի բլուրներէն կրակ բացին մեզի դէմ: Փրանսացիք 4 թնդանօթներ գետեղեցին դաշտին վրայ եւ 25-30 հարուածներէ վերջ չէթէներն փախան, եւ մենք շարունակեցինք մեր ճամբան ոտքով: Մեծ ու պզտիկ, կին ու տղայ, վիրաւորն եւ ծերունին, կը քայլէին ու կը քայլէին: Մերկ, նօթի, յոգնած կը քաշկուտէինք մեր գոյութիւնը: 20ի մօտ պզտիկներ նոյն օրը ուղտերու եւ կառքերու վրայ կրցանք գետեղել, մինչդեռ, եթէ ուզէին Փրանսացիք, կրնային 3-400 քայելու անկարող ծիւրածներուն օգնել, մաս առ մաս զանոնք դնելով գրաստներու եւ կառքերու վրայ:

Հետիոտն քալող հայ կարաւանին համար ամենամեծ դժուարութիւնն անօթութիւնն էր: 23 օրէ ի վեր կէս քիօ կերակուր չուտողներ, սատկած ջորիի ոսկորներով, խոտով եւ խաիրի կտորներով սնանող ժողովուրդի թափօր մըն էին անոնք: Այս տողերն գրողը երկու օր գինետան մէջ թափուած խաղողի եւ չամիչի ջուրը քամուած դերտիրով սնած եմ, որ կ'անուանուի *խաչէֆէ*: Ահա այս էր մեր վիճակը: Նոյն օրը գիշերեցինք էլ Օղլու գիւղը, որ թուրք գիւղ մըն էր⁴¹: Բնակչութիւնն շարաթներէ ի վեր գիւղը լքած ըլլալով, մտանք անբնակ տուններն եւ այդ գիշեր հանգիստ ըրինք: Հետեւեալ օրը, Փետրուար 12, Հինգշաբթի առտու, մեկնեցանք էլ Օղլուէն դէպի Պէլ Բունար⁴²: Օղը արեւով էր այդ օր: Ծիւրածներու կարաւանը կաղն ի կաղ կը քայլէր: Մեզի հետ էին 8,000 Փրանսացի գինւորներն, որոնց 3 հազարը նախապէս Մարաշ գտնւողներ էին, իսկ 3 հազարը Գնդ. Նօրմանի հետ նորեկներն: Իրիկուան մութէն վերջ, գիշերուան ժամը 8¹/₂ին հասանք Պէլ Բունար, ցեխերու մէկ ժամ տեւող դաշտի մը մէջ տապալակելի եւ 50-80 ծեր եւ մանուկներ այդ ճաճանման ցեխերու մէջ զոհ տալի վերջ:

Հասանք Պէլ Բունար գիւղ: Բնակիչները դարձեալ փախած էին: Փրանսական գինուորներն մտան տուններու մէջ եւ հայ ծիւրածներու զանգուածը նետեցին բացօդեայն, քանի որ օղը ամպամած էր եւ հարաւային քամի մը ձիւնի տեղատարափ մը սկսած էր թափել մեր գլխուն: Բնութիւնն ու տարերք դարձեալ սկսան կռուիլ մեզի դէմ:

Ձիւնն սաստկացաւ, մինչեւ լոյս շարունակեց թափել իր թոյնն խեղճ, մերկ, բաց, անօթի հայուն գլխուն: Այդ գիշեր սառեցան 150է աւելի անձինք եւ հետեւեալ օր՝ Ուրբաթ, Փետրուար 13ի առտուն, երբ կարաւանն կը քայլէր շարունակ սաստկացող մրրկախառն ձիւնին տակ, այդ սառողներն կիսամեռ վիճակի մէջ թողուցինք Պէլ Բունարի բացօդեայն եւ քայեցինք: Ծամբաներն կէս կանգուն ծածկուած էին

ձիւնով: Հետք գտնել անկարելի էր: Ֆրանսացի զինւորներ 50-80 հոգի-
 ներէ բաղկացած հայերու խումբ մը առաջ քշեցին ձիւնին մէջէն՝ ճամ-
 բայ բանալու համար յառաջանալիք զինւորներուն: Անոնք հրացաննե-
 րու կոթերուն հարուածներուն տակ ճամբայ կը հարթէին ձիւնին մէջ:
 Ձինւորներն ատկէ կ'անցնէին, իսկ հայերուն համար մահացու մեղք
 էր այդ հայուն բացած ճամբայէն անցնիլ: Ֆրանսական զինւորներ
 հրացանի կոթերով, կիցերով եւ հրմշտկելով մեզի կը քշէին մէկ կան-
 գունի մօտեցող ձիւնի թանձրութեան մէջ: Շատերս կը թաղուէինք եւ
 ահագին ճիգերով ետ կ'ելլայինք դուրս: Սառողներու շարք մը սկսաւ:
 Ամէն երկու ըսպէ, հեռաւորութեան վրայ, մէկ երկու պատիկներ, կի-
 ներ անօթութենէ ծիւրած քաջակազմ մարդիկներ ինկան ու ինկան,
 սառեցան, մեռան եւ դեռ Ֆրանսական զինուորներն կը հրմշտկէին
 մեզի ձիւնին մէջ, եւ դեռ Աստուած կը թափէր ձիւնի սոսկալի մըրիկ
 մը, եւ դեռ տարրերն միացած կը ջանային փճացնել մեզի: Ինկողներ
 հետզհետէ բազմացան, այնպէս որ ամէն 40-50 քայլափոխին հայր ու
 զաւակ, մայր ու աղջիկ իրարու պլուած կ'աղաչէին իրարու, որ ելլեն
 քայլեն: Կ'աղերսէին Ֆրանսացիներուն որ կտոր մը հաց տան, կամ կէս
 ժամ կառքի մը, ջորիի մը վրայ նստեցնեն զիրենք: Խուլ էին Ֆրանսա-
 ցիք: Խուլ էր նաեւ բնութիւնն: Աստուած ալ չէր լսեր ալ մեր պաղա-
 տագին աղերսն, ողբն ու կոծն, անմեղ մանկիկներու ձիւներու տակէն
 բզգիւնի պէս լսուող ճիչերն:

Շարունակեցինք ճամբան մինչեւ կէս օր, միշտ սոսկալի ձիւնի տա-
 րափին տակ: Հոն՝ Ինթէլլի⁴³ մօտ, ճամբան շփոթեցին զինւորներն ու
 հայերն: Սկսանք թափառիլ լեռներու մէջ: Իրիկուան ժամը Ծին ին-
 կանք Ձէնճիրլի Քէօյ⁴⁴: Մաս մը յառաջապահ հայեր եւ զինւորներուն
 մեծ մասը անցան գացին, իսկ մեծ մասամբ հայեր, հայ կամաւորներու
 եւ ալճերիացի գունդի մը հետ մնացինք նոյն գիւղը եւ գիշերեցինք
 անմարդաբնակ տուններու մէջ: Կէս գիշերին ուրիշ գունդ մը ալճե-
 րիացի զինուորներ ալ եկան գիւղը եւ մեզի տուներէն դուրս հանեցին
 բացօդեայն: Բազում աղաչանքով կրցանք երդիքներու տակ թխմուիլ
 եւ ձիւնին տարափէն ազատիլ: Այդ գիշերն ալ լուսցուցինք եւ Փե-
 տրրուար 14, Շարաթ առտու, Ձէնճիրլի գիւղէն մեկնեցանք դէպի Իս-
 լահիյէ: Օդը մեղմացած էր: Նոյն օրուան կէսօրէն վերջ հասանք Իսլա-
 հիյէ: Հետեւեալ օրը մեզի օգնութիւն հասաւ Ատանայի Ազգային
 Միութենէն: Պատուիրակութիւն մը հաց, տաք թէյ, կաթի գօնսէրվէ-
 ներ բաշխեց, պաթթանի տուաւ եւ մեզի գետեղեց տուններու, խանութ-
 ներու, հօթէլի եւ խանի մէջ: Եթէ այդ օրուան օգնութիւնն հասած
 չըլլար Իսլահիյէ հասնող ժողովրդեան 1/3ն ալ պիտի մեռնէր: Ուրիշ
 յիշատակելի պարագայ մըն ալ կայ, որ առանց յիշելու անցնիլ չ'ըլլար:
 Այն է Ֆրանսական բանակին մէջ եղող եւ մեզի ընկերացող հայ կամա-

ւոր գունդին հայոցս հանդէպ ունեցած ազգանուէրի եւ պարտաճանաչի վերաբերումը: Ամբողջ մեր այս տաժանագին ճամբորդութեան մէջ, անոնք շարկեցին մեր պատիկներն, իրենց տրուած սնունդը եւ հացը բաշխեցին խեղճ անօթիներուն, ետեւը մնացողները, քայելու անկարող եղողները խրախուսեցին, թեւերնին մտան յառաջացուցին, մեզի հետ լացին ազնիւ տղաքը: Ապրին անոնք: Հայորդիներ, ճշմարիտ հայեր եղան անոնք: Առնուազն 500 հոգւոյ փրկութիւնն կը պարտինք անոնց: Յիշելու է անունն սէրժան Նշանեանին եւ ուրիշ շատերուն, որոնց դժբաղդարար անուններն անձանօթ են ինձի, որ մէկկիկ մէկկիկ յիշեմ: Արժանի են փառաւորուելու:

16-17 Փետրուարին, մաս առ մաս, հայեր փոխադրուեցան Ատանա, ձրի թրէնով, իսկ մնացողներն, 18 Փետրուար լուսնալու գիշերն եւ 21 Փետրուար, Շարաթ օր, բոլորն ալ դրկուեցան Ատանա: Այս 8 օրուան մէջ միշտ հացով եւ կաթով մեզի օգնեցին Ատանայի հայեր եւ Ազգային Միութիւնը: Շնորհակալութեան պարտք մը ունինք արտայայտելու իրենց հանդէպ:

26. 2. 1920

Հայէպ

Գրեց՝

Նշան Պ. Սաաթճեան
(վաճառական ի Մարաշ
չրջանաւարտ Կ.Թ. Գօլէճի
Այնթապու)

* * *

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԱՐԱՇԻ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մարաշէն Ֆրանսական բանակի զօրասիւնը նահանջեց 1920 Փետրուար 13ին, 21 օրուան աննպաստ եւ ձախող պատերազմէ մը վերջ, յորում քաղաքին բնակչութենէն 12 հազար հայ կին, այր, պատանի եւ երախաներ անխնայ ջարդուեցան քէմալական հորդաններու կողմէն: Նահանջող զօրասիւնին հետեւելով մազապուր փախչողներ եղան, թուով մօտաւորապէս 3500 հոգի՝ ամէն տարիքէ եւ երկու սեռէ: Այս փախստականներուն մօտաւորապէս 1450 հոգին, բնութեան խստութեանը, ձիւնի եւ սաստիկ սառնամանիքի պատճառաւ ճամբան սառած ինկան, մինչեւ որ Իսլահիյէ հասան, ուսկից Ատանա փոխադրուեցան: Այժմ Մարաշի մէջ վերապրող խլեակները 7600 հոգի են, հետեւեալ բաժանումով.

2.000	Հոգի	20էն վեր այր մարդիկ
1.500	>	10-20 պատանիներ՝ երկսեռ
2.000	>	երկսեռ եւ անչափահաս որբեր
<u>2.100</u>	>	կիներ ամէն տարիքէ, որոնց մօտ 800ը այրիներ
7.600	>	գումար

Վերապրող այս թշուառականները Ֆրանսական նահանջին յաջորդող օրերու մէջ, իրենց թաքստոցներէն դուրս բերուած, մերկացուած, թալանուած եւ մի քանի շէնքերու մէջ տեղաւորուած են: Նոյն ատեն, քաղաքի բոլոր հայ տուներ ու խանութներ թալանուած եւ ինչ որ հայուն կը պատկանէր լիովին իւրացուցուած են թրքերու կողմէ: Մերկ, բոպիկ, առանց դրամի, առանց ծածկոցի այս անօրինակ թշուառները ամերիկեան A.C.R.N.E-ի⁴⁵ եւ քոյր A.R.CROSS-ի⁴⁶ կողմէ եղած անմիջական եւ նախախնամական օգնութիւններով փրկուած են զանգուածային եւ անխուսափելի սովամահէ մը: Այդ վեհ գործին մէջ փրկարարի դեր կատարեց A.C.R.N.E-ի հիւանդանոցի բժշկապետ Dr. Wilson, որուն անունը հայ դժբաղդութեանց տարեգրութեան մէջ լուսեղէն եւ ոսկի տառերով արձանագրուած պիտի մնայ:

7600 այս վերապրողներէն մօտ 200 Հոգի թրքերու քով ծառայութեան մտած են, շնորհի ձեւով վճարուած նուազագոյն վարձքի մը փոխարէն, որ ստէպ փառաւոր ծեծով կամ գաւազանահարութեամբ ալ կը խառնուին: Ամերիկեան կարմիր խաչը մարդասիրաբար գործ կու տայ 300ի մօտ այրիներու, հիւանդանոցներու, որբանոցներու եւ այլ նման հաստատութեանց մէջ: Նոյնպէս 2,000 որբերու մեծամասնութիւնն կը գտնուի նոյն վեհ Նպաստամատոյցի Հոգածութեան տակ: Ասկէ գատ, ամերիկեան A.C.R.N.E-ին այրիներու որոշ մէկ մեծ մասին օրական 40 փարա ողջդրամ նպաստ մը կու տայ: Արտասահմանի մեր հայ ազգակիցները մօտերս դրկած էին 1,200 Լիրա Օսմանեան նպաստ մը, զոր Հայ Նպաստամատոյց մարմինն կը բաշխէ անգործ մնացող հայ այրերու: Արդէն գործելու երբեք չեն արտօներ զանոնք թուրքերը եւ բոլոր քաղաքին մէջ 8-10 հայ արհեստաւորներ կը գործեն այժմ, որոնց աշխատութիւնն քմահաճօրէն եւ անխղճօրէն կը վարձատրուին թրքաց կողմէ, եւ անոնց գործելու կը ներեն սա միակ պատճառաւ, որ թրքեր չեն կրնար այդ արհեստները բանել: Ժողովուրդը շուկայ չ'կրնար իջնալ, եւ շատ մը կիներ եւ մանուկներ կը գանակոծուին եւ կը քարկոծուին, երբ իրենց խշտիկներէն դուրսը տեսնուին: Յարդ, այսինքն նահանջէն վերջ, 50է աւելի աչքառու հայ այր մարդիկ անհետացուցուած են քաղքին մէջ եւ 34 երեւելի ազգայիներ բանտարկուած են, որոնց 3ին դատաւարութիւնն լրացած եւ մէյմէկ տարուան խցարգելութեան դատապարտուած են: Մնացեալներու հարցաքննութիւնն իսկ կատարուած չէ: Աւելորդ է յիշել անոնց վերագրուած

ամբաստանութիւնն. այդ է Ֆրանսասիրութիւնն: Քաղաքին մէջ չ'կայ
ոեւէ Ազգային Իշխանութիւն, որ առօրեայ պատահած քստմանիւ
Հարստահարութեան եւ բռնութեանց դարման տանիլ խորհի, եւ այդ
անկարելի է արդի պայմաններու տակ: Միայն Հայ Նպաստամատոյց
Մարմին մը կայ, ընդ պաշտպանութեամբ Ամերիկեան Նպաստամա-
տոյցին: Յարդ բռնաբարումի եւ կուսապղծութեան երկու շնական
արարքներ գործուած են Հայերու վրայ թրքերու կողմէ: Առօրեայ Հայ
կեանքին մասին սա չափը ըսել բաւական է, որ օրը մէկ քանի անգամ,
չարաթը տասնեակներով ջարդի եւ թալանի սպառնալիքներ, խուճապ
եւ ծակէ ծակ փախուստի դէպքեր կը պատահին: Թուրք խուճանի վայ-
րենացած եւ գերագրգռուած ատելութիւնն եւ սանձարձակ գործելա-
կերպը արգիլելու կարող կառավարութիւն մը չ'կայ: Նոյնիսկ խենդ մը
փողոցին մէջ մէկ ձեռք ատրճանակ արձակելով կրնայ 7800 Հայու-
թիւնն ծակամուտ թխմել հոն ու հոս եւ ժամերով մահուան մղձաւան-
ջին տակ պահել: Անտանելի, անկրելի, անբացատրելի է այդ իրապէս
«թշուառ»ներու վիճակը:

Յարդ Հայ ժողովրդեան եւ մեծերու ստորագրութեամբ, Պօլսոյ,
Քէմալի եւ օտար թրքասէր իշխանութեանց ուղղուած հեռագիրներ,
աղերսագրեր եւ այլն, բոլորովին սուտ են եւ Հայեր ստորագրած են
զանոնք թրքական սպառնալիքի տակ եւ բոլորովին բռնադատուած:
Համաձայնական, յունական, Ֆրանսական ոեւէ մէկ յաջողութիւն զա-
նազան ճակատներու վրայ, այնքան կը գրգռէ թուրք խուճանին զայ-
րոյթը, որ յոխորտանօք կը յայտարարեն Հայերու թէ մօտ է իրենց վեր-
ջին ժամը:

Տարագրութենէ դարձող Հայեր, պատերազմի միջոցին իրենց փր-
ցուած տուներէն մէկ մասը նորոգած էին, իսկ անվնաս մնացողներ ալ
Հաստատուած էին իրենց ընտանեկան օճախին մէջ, որով 4,500ի մօտ
Հայ տուներէ կը բաղկանար Հայկական բաժինն քաղաքին: Այժմ այդ
թուէն Հազիւ 200 տուն կանգուն կը մնան: Մնացեալը հրկիզուած են
մեծ մասամբ եւ մաս մըն ալ Ֆրանսական նահանջէն վերջ փլցուած են:
Յարդ կանգուն մնացող 200 տուներու դուռ, պատուհան, սալալա-
տակ, բազրիկ, կղպանք եւ ամէն ինչերն ամէն օր կը քակուին եւ կը
տարուին թրքերու կողմէ, եւ այս՝ կառավարութեան աչքին առջեւ:
Աւելի դառն պարագայ մը. թշուառ մնացած Հայեր օր ըստ օրէ թրքե-
րու կը ծախեն իրենց արտ, այգի, պարտէզ, տուն, խանութ եւ այլ ան-
չարժ կալուածներն, անսուաղ չ'մեռնելու համար եւ այդ Հազիւ մէկ
տասներորդ գնովն իր իրական արժէքին: Հայ երեւելիներէն շատեր
թրքերու կողմէ բռնութեամբ կը տարուին կառավարչատուն եւ հոն
Հայերու կալուածներն «թափու» ընել կու տան թուրք որոշ մեծամեծ-
ներու անուան եւ այս ստէպ առանց փոխարժէքի մը վճարման: Այս

երկու ձեւ կալուածական վաճառումով մինչեւ 3-4 ամիս Մարաշի Հայութիւնն պիտի գրկուի իր հողային եւ կալուածային բոլոր ստացուածքներէն եւ պիտի մնայ կատարեալ մուրացիկի մը հանգամանքին եւ վիճակին մէջ:

Եօթը ամիսներէ ի վեր Մարաշի Հայութենէն ստացուած նամակներ եւ տեղեկագրեր, որոնք խիստ գաղտնի միջոցներով կրնան դրկուիլ, կը պաղատին եւ կ'աղերսեն, որ փրկելու միջոցներ խորհի Ազգը՝ զիրենք այդ դժոխքէն ազատելու, այլուր փոխադրելու համար: Անոնք պատրաստակամութիւն կը յայտնեն չոր հացի մը համար մշակութիւն, գործաւորութիւն ընել, ազատ օդի մը, խաղաղ շրջանակի մը մէջ: Այս է ահա անոնց միահամուռ իղձը: Ամէն օր ջարդի վտանգ կայ հոն: Այսօր թերեւս զանոնք փրկել կարելի պիտի ըլլայ, իսկ երբ ուշանայ, օր մը լսած պիտի ըլլանք, որ անոնք այլեւս գոյութիւն չունին:

Այս տեղեկութիւններն ստացուած են խիստ մօտերս Մարաշէն փախուստով հոս հասնողներէ եւ ծածկաբար դրկուած պաշտօնական տեղեկագրութիւններէ, որոնք ստորագրած են տեղւոյն յարանուանական պետերու եւ երեւելիներու կողմէն: Մատուցանելով զայս, կը խնդրենք, որ կոչում մը ընէք մարդասիրական ոգւոյն այն անշահախնդիր իշխանութեանց մօտ, որոնք կրնան դարման մը խորհիլ եւ գործադրել այդքան անմեղ վերապրող խեղճերու կեանքին ապահովութեանը մասին: Մնամք խորին յարգանքներով:

Հալէպ 23 Օգոստ. 1920

Յ. Ե. Շատարեւեան

Պ. Գրաճեան

Ա. Մոմճեան

Յովհաննէս Սարգիսեան

Ն. Սաաթճեան

Քերոբ Թիւթիւնճեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Սաաթճեանի «Մարաշի Աղէտը 1920-ին. Աօպետական Ֆրանսայի Անփառունակ Նահանջը» խորագրով վկայութիւնները, յուշերու ձեւով, լոյս տեսած են Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, Պէյրութ, Հրատարակութիւն «Զարթօնք» Օրաթերթի, 1965, էջ 830-845: Յուշերը գրի առնուած են դէպքերէն շուրջ 45 տարի անց: Որոշ ընդհանրութիւններով հանգերձ, անոնք մեր կողմէ հրապարակուող վաւերաթուղթէն կը տարբերին իրենց թէ՛ բովանդակութեամբ, թէ՛ բնոյթով: Իրրեւ առաւել վաւերական եւ հարազատ վկայութիւն կ'ընդունինք ներկայիս մեր հրապարակածը՝ դէպքերուն յաջորդող օրերուն գրի առնուած տեղեկագիրը, մանաւանդ որ ան գերձ է ժամանակի ընթացքին կրած ազդեցութիւններէ, ինչպէս նաեւ յետագայի եզրակացութիւններէ ու գնահատականներէ:

² Ե. Թ. Թորոսեան, *Կրիկիայի Հայերի Ազգային-Ազատագրական Շարժումները 1919-1920 թ.թ.*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1987, էջ 148:

- ³Ռ. Գ. Սահակեան, *Թուրք-Ֆրանսիական Յարաբերութիւնները Եւ Կիլիկիան 1919-1920 թթ.*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 148:
- ⁴Materne Mure, 'Le massacre de Marache (février 1920)', extrait du *Flambeau: Revue belge des questions politiques et littéraires*, 4e année, no. 1, janvier 1921, էջ 8, *Թարգմանաբար մէջբերուած՝ Սահակեան, էջ 150:*
- ⁵Նոյն, էջ 161:
- ⁶Զօր. Լուի Ալպէր Բէրէթ Արեւելեան Կիլիկիոյ՝ Այնթապի, Ուրֆայի եւ Մարաշի Ֆրանսական զօրքերու վերին հրամանատարն էր:
- ⁷Այսինքն՝ կառավարիչին փոխանորդը Այս եւ մնացեալ բոլոր ընդգծումները՝ հեղինակինն են:
- ⁸Այսինքն՝ քաղաքագլուխ:
- ⁹Թաղապետ Մուհամէտէճի Հաճի Բէօր Ալի Պէյ Իթթիհատական Կոմիտէի անդամ եւ Մարաշի թուրք երեւելիներէն էր:
- ¹⁰Գոճապաշ Օղլու Հաճի Նաճի Իթթիհատական Կոմիտէի անդամ եւ Մարաշի թուրք երեւելիներէն էր:
- ¹¹Քեթիպ Չատէ Մէհմէտ Մարաշի Իթթիհատական պարագլուխներէն էր:
- ¹²Շիշման Չատէ Արէֆ Մարաշի թուրք երեւելիներէն էր:
- ¹³Աճէմլին Մարաշի թաղերէն մէկն էր, խառն՝ հայ եւ թուրք բնակչութեամբ: Մարաշ քաղաքը կը տարածուէր եօթը բարձր բլուրներու վրայ. ըստ այդմ՝ բլուր եւ ձորամէջ կը կազմէին Մարաշի բնական թաղերը: Քաղաքը բաղկացած էր 41 թաղերէ:
- ¹⁴Սէրայ Ալթըն Մարաշի գլխաւոր թաղերէն էր, որ նոյնպէս ունէր խառն՝ հայ եւ թուրք բնակչութիւն:
- ¹⁵Գերմանական Մանչերու Որբանոցին շէնքերը՝ Պէյթ Շալոմ, կը գտնուէին Քիւնպէթի բլուրին վրայ, քաղաքին հիւսիսային կողմը:
- ¹⁶Հայ Բողոքականաց Ա. Եկեղեցին կը գտնուէր Տիւանլը թաղին զառիվարը:
- ¹⁷Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցին կը գտնուէր Տիւանլը թաղին մէջ:
- ¹⁸Լատինաց վանքը՝ Թէրրա Սանթա Միսիօն, Մարաշի ամէնէն շքեղ կառոյցներէն մէկն էր եւ քաղաքին հիւսիսային կողմը՝ գեղեցիկ դիրքի մը վրայ, կը գտնուէր:
- ¹⁹Ս. Քառասուն Մանկունք Մայր Եկեղեցին՝ Մարաշի եկեղեցիներէն ամէնէն բազմամարդն ու բարդաւածը, կը գտնուէր քաղաքին հարաւային կողմը: Հոս էր նաեւ Ազգային Առաջնորդարանը:
- ²⁰Նշեալ վայրերը Մարաշի գլխաւոր շուկաներն ու խաներն էին:
- ²¹Շէքէրտէրէն Մարաշի արեւմտեան կողմը, միջնաբերդին հայող դուռ հայարնակ թաղերէն մին էր:
- ²²Ս. Գէորդ Եկեղեցին կառուցուած էր Մարաշի արեւմտեան կողմը՝ Շէքէրտէրէ թաղին կեդրոնը:
- ²³Հայ Թաղի կեդրոնը կառուցուած բարձրադիր ու քարաշէն Ս. Աստուածածին Եկեղեցին Մարաշի հնագոյն եկեղեցին էր. ունէր աւելի քան հազարամեայ հնութիւն:
- ²⁴Հայկական թաղերու իրարմէ հեռաւորութիւնն ու կտրուածութիւնը եւ ըստ այդմ մարաշահայութեան ցրուածութիւնը արդեւ կը հանդիսանային յաջող ինքնապաշտպանութեան համար: Այդ իսկ պատճառով, որոշում կ'անուի ձգել ձայրամասային թաղերը եւ կեդրոնանալ գլխաւորաբար եկեղեցիներու մէջ: Չնայած ինքնապաշտպաններու հերոսական ճիգերուն, թուրքերը՝ յարձակելով եկեղեցիներու վրայ եւ զանոնք ամբողջովին նախով ողողելէ ետք, հրոյճարակ կը դարձնեն եկեղեցիներն ու աջտեղ պատասպարուած հազարաւոր հայեր:
- ²⁵Տէօնկէլէն Մարաշէն դէպի արեւմուտք, Ճիւան գետի աջ ափին գիւղ մըն էր՝ 120 տուն (կամ շուրջ 1000 հոգի) զուտ հայ բնակչութիւն: Կիլիկիոյ 1909ի դէպքերուն կը յաջորդեն ընդհանուր պատերազմի ու տեղահանութեան տարիները, եւ Տէօնկէ-

լէ եւս՝ շրջանի բոլոր հայ գիւղերուն նման, ամբողջովին կ'աւերուի թուրքերու կողմէ: Ձինադադարէն ետք վերապրող տէճնկէլիցիներ կը վերադառնան հայրենիք եւ կը փորձեն վերաշինել գիւղը, սակայն շուտով վրայ կը հասնին Մարաշի վերջին կոտորածները, որոնց զոհ կը դառնայ նաեւ Տէճնկէլի հայութիւնը:

²⁶ Եէնիճէ Գալէ (Նոր Բերդ) Մարաշէն դէպի հիւսիս-արեւմուտք գիւղ մըն է, ձորի մը մէջ, չորս կողմէն շրջապատուած անտառուտ լեռներով: Ունէր 150 տուն կամ 800 հոգի զուտ հայ բնակչութիւն: Եէնիճէ Գալէի հայութիւնը նոյնպէս կը կրակ շրջանի բոլոր հայ գիւղերու բնակչութեան դառն ճակատագիրը:

²⁷ Քիչլիֆլին Մարաշ կեդրոնին ենթակայ ամբողջովին հարսնակ գիւղ մըն էր, քաղաքին հարաւ-արեւմտեան կողմը: Ունէր 82 տուն, մօտ 450 բնակիչ: 1895ի եւ անոր յաջորդող կիլիկեան կոտորածներու շրջանին գիւղը ամբողջովին թալանի կ'ենթարկուի շրջակայ գիւղերու թուրք խուժանին կողմէ: Մեծ կորուստներու զնով եւ քանիցս ինքնապաշտպանութեան դիմելով, Քիչլիֆլիի հայութիւնը կը յաջողի ետ մղել Ջարդարար խումբերը: 1915ին դրացի թուրքերը դարձեալ կը յարձակին գիւղին վրայ եւ քիչլիֆլիցիներ ստիպուած կը լքեն հարազատ գիւղն ու կ'ապաստանին Փընտըճագ, ուր կը մասնակցին ընդհանուր ինքնապաշտպանական կռիւին: Գիւղին փոքրաթիւ վերապրողները կը բնաջնջուին 1920ի աղիտալի կոտորածներու ընթացքին:

²⁸ Փընտըճագը Մարաշի դիստոր հայկական գիւղն էր, քաղաքին հարաւ-արեւմուտքը: Պատերազմէն առաջ Փընտըճագ ունէր 300 տուն, 2200 բնակիչ: Հակառակ Փընտըճագցիներուն մղած հերոսական պայքարին, գիւղն անխնայ կոտորածներու կ'ենթարկուի 1915ին: Ձինադադարէն ետք, շուրջ 1000 վերապրողներ կը վերադառնան հայրենիք՝ ապաւինելով Գաշնակից Բանակներու ներկայութեան եւ կը ջանան վերաշինել իրենց կործանած գիւղը: Սակայն, շատ չանցած, ծայր կ'առնէ ընդհանուր տարադրութեան եւ բնաջնջումի ալիքը, եւ Փընտըճագցիներ կրկին կը դիմեն ինքնապաշտպանութեան: Ոյժերու եւ միջոցներու անհաւասար պայմաններու տակ, այս քաջ լեռնականները արիւնալի մարտեր կը մղեն թշնամի բանակին դէմ: Ի վերջոյ, թրքական զօրքը կը յաջողի ներխուժել գիւղ եւ հաշուեյարդար տեսնել Փընտըճագցիներու հետ՝ անխնայ ջարդերու ենթարկելով բոլորը՝ առանց սեռի եւ տարիքի խտրութեան:

²⁹ Զէթէական խումբերը Եղեռնի նախօրեակին կազմաւորուեցան օսմանեան կառավարութեան անմիջական հովանաւորութեամբ: Անոնք բանտերէ արձակուած գողեր, աւազակներ եւ յելուզակներ էին, որոնք յետագային պարբերաբար կը համալրուէին նմանատիպ տարրերով: Կառավարութեան կողմէ զինուած չէթէներուն ազատութիւն տրուած էր յարձակելու հայոց վրայ, կողոպտելու եւ սպաննելու զանոնք, քանդելու անոնց գիւղերը: Աղբիւրներու մէջ, Մարաշի 1920ի դէպքերուն մասնակից չէթէներուն թիւը 500-600 կը համարուի: Անոնք ունէին միեւնոյն տարազը՝ կը կրէին մինչեւ ուսերը իջնող ճերմակ գլխանոց, ոտքերուն՝ արեւի Ձինուած էին գերմանական մառզէր հրացաններով, կարճ, երկսայրի սուրբերով եւ մահակներով (սոփա)՝ տե՛ս՝ Գրիգոր Գալուստեան, Մարաշ Կամ Գերմանիկ Եւ Հերոս Չէյթուլ, Երկրորդ Հրատարակութիւն, Նիւ-Եորք, 1988, էջ 81A:

³⁰ Ուլու Ճամին քաղաքի ամենամեծ մզկիթն էր: Մարաշի վերջին դէպքերուն, քանի մը օրուայ ընթացքին, Ուլու Ճամիի մէջ պարզապէս կը խողխողուին աւելի քան երեք հազար հայեր, մեծ մասամբ՝ կիներ, մեծահասակներ ու երեխաներ:

³¹ Այսինքն՝ կիրի օճախ Հազարաւոր հայեր ողջ-ողջ կամ դիտապարտ կը նետուէին կիրի այս փուռերուն մէջ: Այդպիսով, թուրքերը կ'ազատէին օրէ-օր բազմացող դիակները թաղելու ձանձրոյթէն:

³² Այսինքն՝ «Օգնեցէ՛ք հայերուն»:

- ³³ Իսլահիյէն աւան մըն էր Ատանայի Նահանգի Ծաղալ Պարաքաթ գաւառին մէջ, Պաղատտի Երկաթուղիին մէկ կայարանը, ուր կը կեդրոնանային Փրանսական տեղաշարժող զօրքերը:
- ³⁴ Այսինքն՝ ինքնագործ հրազէնի տեսակներ:
- ³⁵ Արասան Մարաշի թաղերէն էր՝ խառն, հայ եւ թուրք բնակչութեամբ, ուր կը գտնուէր հացահատիկի գլխաւոր շուկան:
- ³⁶ Այսինքն՝ «Գերեզմանոցէն զատ երթալիք ուրիշ տեղ մը չմնաց, անհաւատ Փրանսացիներ, դուրս ելէ՛ք, յանձնուեցէ՛ք»:
- ³⁷ Գնդապետ Ռոպէր Նորման (Robert Normand) Մարաշի Փրանսական զօրքերուն օգնութեան հասած զօրասիւնի հրամանատարն էր:
- ³⁸ Այսինքն՝ վաշտ:
- ³⁹ Այսինքն՝ ռամբակոծութիւնը»:
- ⁴⁰ Ազատուն Մարաշի շրջակայքէն անցնող եւ շրջանի ցորենի եւ բրինձի արտերը ոռոգող գետակ մըն էր:
- ⁴¹ Էլ Օղլուն Մարաշ գաւառի գլուղերէն էր: Մինչեւ 1909ի Կիլիկիոյ կոտորածները գլուղն ամբողջովին հայաբնակ եղած էր:
- ⁴² Գլուղ՝ Կիլիկիոյ մէջ:
- ⁴³ Ինթէլլին գլուղ է Կիլիկիոյ մէջ, Ամանոս լեռնաշղթայի տարածքին: Մեծ Եղեռնի օրերուն, այս գլուղը Տէր Զօր տանող երթուղիին վրայ գտնուող կայաններէն էր:
- ⁴⁴ Կիլիկիան երկրամաս՝ Ամանոս լեռներու մօտ:
- ⁴⁵ ACRNE (American Committee for Relief in the Near East) կամ Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Օգնութեան Կոմիտէն ստեղծուած էր 1918ին՝ Առաջին Աշխարհամարտի օրերուն ծնունդ առած Հայկական եւ Սուրիական Նպաստամատոց Կոմիտէներու միաւորումով: Կոմիտէի առաջնութիւնն էր պարէնով, հագուստով եւ դեղորայքով օժանդակել Մերձաւոր Արեւելքի երկիրներու պատերազմէն տուժած եւ կարիքաւոր բնակչութեան՝ հայերու, յոյներու, ասորիներու, եւլն»:
- ⁴⁶ Այսինքն՝ Ամերիկեան Կարմիր Խաչի:

TWO UNPUBLISHED DOCUMENTS
ON THE 1920 TRAGEDY IN MARASH
(Summary)

VARTY KESHISHIAN

The author publishes for the first time - with an introduction and annotations - two unpublished documents describing the withdrawal of French troops from the city of Marash in Cilicia in early 1920, the capture of the city by the Turkish Nationalist forces of Mustafa Kemal, and the massacre and flight of the local Armenian population. The first document was written by Nishan Saatjian in late February 1920, after he had taken refuge in Aleppo. It gives a detailed chronological description of events in Marash and the disastrous flight of the Armenian refugees between 21 January and 21 February 1920. The second document was again written in Aleppo on 23 August 1920. It is signed by Saatjian and five other Armenian notables from Marash. Based on reports the signatories had received from their home town, the document describes the difficulties faced by those Armenians who had stayed in Marash after it had been taken over by the Turkish Nationalists.